1028. ՏԱՊԱՆԱՔԱՐ. դագաղածև, գյուղի եզրին, եկեղեցուց ոչ հեռու, հարավային ճակատին, 6 տող.

ԾՆ 1740
ԵՍ՝ ՋԻԼԱՎԸՍ, ԱԼԽԱՆԵՆ
1819 ՄԵՐ ԸՆՏ[Ա]ՆԵՕՔ ԱՋԱ-
ՏԵՑԱՆՔ Ի ՃՈՐՏՈՒԹԵՆԷՆ:
ՋԱՒՐԸՆԱԿՑԷ: 1848 ԱՄԻ Վ[Ա]ԽՃԱՆ
ԱՌԻ:

Ծանոթ. Ջիլավը ճորտությունից ազատել է իր գերդաստանը, կոտորել Լոռի ներխուժած լեզգիների ջոկատը:

1029. ԿԱՄՈՒՐՋ. Ջորագետի վրա, խելի արևելահայաց պատին, 6 տող.

ԿԱՄՈՒՐՋՍ ԿԱՌՈՒՑ
ԻՆ ԵՂԲԱՐՔ ԹԱԴԷ
ՈՍ ԵՒ ԱԼԷՔՍԱՆ
ՋԻԼԱՎԵԱՆՑ ԵՒ ԿԻՆՆ
ԱԼԵՔՍԱՆԻ՝ ԽԱՄՓԵՐ-
ՎԱՆ: 18 $\frac{7}{1}$ 93:

Ծանոթ. Կամրջի աջ թևը բնական ժայռն է, որը հարթվել է, և մյուս ափի խելը հավասարազոր պատ է, որոնց վրա դրվել են գերաններ սայլերի, հետիոտնի, անասունների և երիվարների անցման համար: Ի դեպ, վիմագրի տակ նշմարվում են հին գրերի հետքեր՝ ջնջված Ջիլավյանների կողմից կամուրջը վերակառուցելու ժամանակ:

1030. ԽԱՉՔԱՐ. Ագարակի գյուղամիջյան եկեղեցու շրջապատի գերեզմանոցում, թևերի վրա 1 տող.

Թ[ՎԻՆ] ՉԿԴ (1515):

ԼԵՌԱՆ

1031. ԵԿԵՂԵՑԻ. մուտքի գլխին և արևմտյան պատի խաչի երկու կողմում, 3 տող.

1892
ՍԵՐԳԻ ՊԵՏ
ԳՐԻ ԳՈՒԼԽԱՆ

1892
ՍԵՐԳԻ, ՊԵՏ[ՐՈՍ]
ԳՐԻ ԳՈՒԼԽԱՆ

ՀՊՎԱ

Ծանոթ. Եկեղեցին հիմնովին վերաշինվել է 1892 թ.: Գյուղացիները կոչում են Կարմիր վանք: Այն եռանավ բազիլիկ է, երկթեք տանիքով, խորանը քառալանջ է՝ ծածկված քարի ելունավոր սալերով: Պատերը շարված են տարագույն, կանոնավոր մշակված քարերով: Պատերի մեջ կան հին բեկորներ, նաև՝ խաչքարեր: Լուսամուտից ցած խաչի

հորիզոնական թևերի եզրաքարերին ձեռքի քանդակներ են՝ կից մակագրություններով: Թեև երկմտելի, բայց հիշատակված են շինարար վարպետները (Սերգի, Պետրոս) և նրանց գործընկեր գրիչը՝ Գուլխանը, որը նաև քանդակների հեղինակն է:

Եկեղեցին շրջապատված է գերեզմանոցով, ուր, թերևս, թաղումներ են արվել Կյուրիկյանների ժամանակներից ի վեր:

ՈՒՌՈՒՏ

1032. ԽԱՉՔԱՐ. ագուցված գյուղից 2 կմ արևմուտք, XIX դ., վերանորոգված մատուռի հյուսիսային պատին, մի մասը՝ ջարդված, եզրակողին, 1 տող (XIV դ.):



ԿԱՆԿ Ն ԵՑԻ ԽԱՉՍ ԱՐԳՆԱԿԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ:

Ծանոթ. Պատերին ագուցված են մի քանի խաչքարեր ևս:

ՍՎԵՐԴԼՈՎ

Գյուղը հարուստ է վաղ քրիստոնեական հուշարձաններով: Գյուղի կենտրոնում գտնվում է T-ձև հատակագծով վաղ քրիստոնեական մի եկեղեցի, իսկ մոտ 1-1,5 կմ հյուսիս-արևելք կանգնած է խաչաձև հատակագծով, այս տեղին ոչ բնորոշ մեծության կենտրոնագմբեթ Ս. Աստվածածին եկեղեցին, որը մասնագետների կողմից մերթ համարվել է VII դարի եզակի նմուշ,[100] մերթ էլ, ելնելով եռախորան հատակագծային հորինվածքի և դեկորատիվ տարրերի յուրահատկություններից՝ VIդ. առաջին կեսով, որն ավելի հավանական է: Տեղացիների կողմից կոչվում է Դորբանդավանք:

Այս հուշարձանից մոտ 700 մ արևելք գոյություն ունի թաղածածկ մատուռ՝ բավականին խորն ընկած բեմական խորանով և երկու կողմերում տեղավորված ավանդատներով:

Մի թաղածածկ մատուռ էլ գտնվում է գյուղի հյուսիսակողմում, բլուրի վրա՝ բազմաթիվ նորոգումների հետքերով:

Երկու ուշ միջնադարյան արձանագրություններ կան գյուղամիջի հնագույն եկեղեցու վրա:

1033. ԵԿԵՂԵՑԻ. հարավային մուտքի արևելյան որմնասյան խոյակին. 3 տող.

ԵՍ՝ ՈՍԿԱՆ-
Ս ԳՐԵՑԻ Թ-
Վ[ԻՆ] ՌՂ (1641):

---

[100] *С.Х. Мнацаканян.* Об одном неизвестном типе сооружений древнеармянской архитектуры. «Տեղեկագիր» հաս. գիտ., 1952, N 7, էջ 95-106. *Վ. Գրիգորյան,* Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ հուշարձանները, Եր., 1982, էջ 28-29: